


Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք!

Ռ. ԴԱԾՏՈՅԱՆ

ԳԻՐՔ № 3

ԽՈՐՀՈՒԹՅԱՆԵՐԻ
ՎԵՐԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱԽՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929 թ.

342.8
Դ-19

01 MAR 2010

Պրոլետարիական բոլոր յերկրների միացե՛ք

Ո. ԴԱՇՈՅՑԱՆ

ԳԻՐՔ № 3

ԽՈՌՀՈՒՐԴՆԵՐԻ
ՎԵՐԼՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱԽ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՔ

ՅԵՐԵՎԱՆ

1929 թ.

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհուրդները կազմում են Բանվորա-գյուղացիական խշանության հիմքը։ Նրանք աշխատավորների այն կազմակերպություններն են, վորոնց միջոցով բանվորներն ու գյուղացիները, բանվորուհիներն ու գեղջկուհիները կառավարում են յերկիրը, պրոլետարական գիշատառութայի հիմքերն են ամրապնդում, սոցիալիզմն։ Են կառուցում։ «Խորհուրդները—ասում ե ընկ. Լենինը—աշխատավորների և շահագործվող մասսաների անմիջական կազմակերպություններն են, վորոնք հնարավորություն են տալիս նրանց պետություն կազմակերպելու և այն կառավարելու»։

Խորհուրդների այս կարեսը դերից բղխում ե նաև այն բացառիկ խոչոր քաղաքական նշանակությունը, վորունեն նրանց վերընտրությունները մեր յերկրում։

«Խորհուրդների վերընտրությունները հանդիսանում են կարեսը դպրոց՝ աշխատավորական լայն մասսաների քաղաքական դաստիարակության և նրանց խորհրդային շինարարությանը մասնակից անելու»—բազմաթիվ անդամներ կրկնվել ե մեր կուսակցական և խորհրդային բարձր մարմինների բանաձեռում։

Խորհուրդների վերընտրությունները պետք ե ծառայեն վորպես գործնական դպրոց լայն մասսաների քաղաքական դաստիարակության համար։ Նրանց միջոցով աշխատավորությունը պետք ե մասնակից դառնա պետության քաղաքական-հասարակական կյանքին։

Այս տեսակետից յենելով, առաջիկա վերընտրություններին ևս, խորհուրդների աշխուժացման և նրանց ամրացման լոգունգը, վոր վերջին տարիներն առաջադրել են կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային խշանությունը, և վորն անշեղ կիրառում են նըրքանք կյանքում, լինելու յե ընտրական կամպանիայի հիմնական լոգունդներից մեկը։

ՀԱՅՊՈԼԻԿԱԳՐԱԿԱՆ Ի ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 1139
ԳՐԱՌԵՊԱՐԱԿԱՆ 1626 Բ.
ՏԻՐԱԺ 3500



Աշխատավորական զանդգածների ակտիվությունն աճում է մեծ արագությամբ։ Գյուղացիական մասսաները տնտեսապես ամրանալով, զարգացել են նաև կուտառապես և քաղաքականապես։ Նրանք գիտակցում են իրենց չափազանց մեծ հետամնացությունը և ուղիներ են փորոնում ու ծրագրներ են առաջադրում՝ իրենց դրությունը ըարելավելու համար։

Գյուղում սրգում է զասակարգային պայքարը։ Մյուս կողմից մենք տեսնում ենք ստեղծվել և առաջավոր, ակտիվ գյուղացիների մի ամբողջ շարան, վորոնք ձգտում են աշխատելու, կազմակերպվելու, լծվելու պետական-հասարակական գործին։

Մեր առաջ դրված խնդիրներից մեկն ե կազմակերպել այդ ակտիվությունը և ուղղել այնպիսի հունով, վոր նա ընթանա մեր սոցիալիստական շինարարության ուղղով, ոգտագործել առաջավոր ակտիվ տարրերին սոցիալիստական շինարարության նպատակների համար։

Դրան կարելի յե հասնել միմիայն այն գեպքում, յեթե մենք կարողանանք աշխատավորական լայն ժամաներին մասնակից անել մեր ամենորյա գործնական բազմաթիվ ու բազմատեսակ աշխատանքներին, մեր յերկրի քաղաքական և տնտեսական կյանքի ամենորյային, մեր յերկրի պաշտպանության, արտադրության և գյուղատնտեսության զարգացման աշխատանքներին, կուլտուրական հեղափոխության, դպրոցի, նոր կենցաղի, անդրագիտության վերացման և այլ բազմաթիվ հարցերի լուծմանը։

Խորհուրդներն այն կազմակերպություններն են, վորոնք կարող են բանվորի և գյուղացու այդ ակտիվությունը և ինքնազործունեությունը իրենց չուրջը հավաքել ու կազմակերպել նրանց։ Խորհուրդների կառուցվածքն այնպես է, վոր նրանք լինելով իշխանության մարմիններ, միևնույն ժամանակ պետք և անհրաժեշտություններ ուղարկում են։

Առաջիկա վերընարությունների ընթացքում մեր նպատակն ե լինելու ամենալայն չափով ոգտագործել

ընտրական կամպանիան աշխատավորությանը խորհուրդների չուրջը կազմակերպելու, հետաքրքրելու լայն մասսաներին խորհուրդների աշխատանքներով, ամենալայն չափով մասնակից անելու նրանց ընտրություններին և բացատրելու նրանց այն խոչըր նշանակությունը վոր ունեն ընտրությունները մեր սոցիալիստական շինարարության համար։ Մենք պետք ե լիովին ոգտագործենք ընտրական կամպանիան մասսաների քաղաքական դաստիարակության համար։

Սոցյալ ընտրությունների ժամանակ մենք անպայման ունեցել ենք մասսաների ակտիվացման աճում։ աճում վո՞չ միայն նրանց թվական, քանակական աճման մտքով, այլ և վորակի տեսակետից։ Խորհուրդների գործունեության քննազատություն, նակազմների ընդունելություն, սուր զասակարգային պայքար, տեղական հրատապ հարցերի առաջադրում և այլն—անշուշտ տեղի յեն ունեցել։

Մյուս կողմից մեր գյուղխորհուրդները նույնպես անպայման աճել են. անվիճելի յե, վոր նրանք հետզհետե զառնում են իրենց ըլջանի հասարակական-տնտեսական-կուլտուրական կյանքի կենարոնը։ Մեր պարբերական հետազոտություններն և մեր մամուլը այդ են առում։ Բավական ե հարեւանցիորեն աչքի անցկացնել հարցերի այն ցուցակը, վոր մեր խորհուրդները քննում են, համոզվելու համար, վոր այդ այդպես ե։

Սակայն մեզ բոլորիս հայտնի յե, վոր թե՛ ընտրությունների ասպարիզում և թե խորհուրդների գործունեության մեջ մենք չափազանց խոչըր բացեր ունենք, վոր պետք ե աշխատենք ուղղել առաջիկա ընտրական կամպանիայի և հետազա աշխատանքների ընթացքում։

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մեր պաշտոնական տվյալների համաձայն, անցյալ ընտրություններին ազգաբնակության մասնակցությունն արտահայտվել ե քաղաքում—56,1 տոկոսով և գյուղում—46,58 տոկոսով։ Համամիութենական տըվ-

յարների հետ համեմատած, մեր մասնակցության միջին տոկոսը հետ ե մնում՝ քաղաքում—3 տոկոսով, դյու- դում—1,42 տոկոսով:

Համեմատած նախանցյալ 1926 թվի ընարություն-ների հետ մենք ունենք զգալի աճում քաղաքներում, վորակ 1926 թվին ընտրություններին մասնակցել են ընտրողների միայն 44,5 տոկոսը: 1927 թվին աճումը հավասար է 11,6 տոկոսի: Գյուղի մասնակցությունը թե 1926 և թե 1927 թվերին համարյա միենայն է մնացել:

Ընդհանուր ազգաբնակության (քաղաքի և գյուղի ընտրողների) մասնակցությունն ընտրություններին 1927 թվին արտահայտվել է 47 տոկոսով: Սա ի հարկ բավարար տոկոս չէ:

Մեր նպատակն է ամրող աշխատավորությանը 100 տոկոսով մասնակցից անել խորհուրդների ընտրություններին: Այս տարի պետք է ամեն ջանք թափել, վորպեսզի ընտրողների ձնող մեծամասնությունը մասնակցի թե՛ հաշվետու ժողովներին և թե՛ անմիջապես ընտրություններին: Առանձին աշխատանք պետք է տարվի գլխավորապես կանանց ավելի թվով մասնակցից անելու ընտրություններին, չմոռանալով, իհարկե, նաև տղամարդկանց հետամնաց տարրերին նույնպես առաջ քաշել:

Այս տարվա ընտրություններին մեր նշանաբանը պետք է լինի՝

ա) արտադրության մեջ աշխատող բոլոր քանվորների և քանվորուիթերի 100 տոկոսային մասնակցությունն ընտրություններին.

բ) գյուղական վայրերի ընտրողների ննշող մեծամասնության մասնակցությունն ընտրություններին:

ԿԱՆԱՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կանանց մասնակցությունն ընտրություններին քա- զաքներում բավական բարձր է, նա հասնում է 40 տոկոսի: Գեղջկուհու մասնակցությունը, սակայն, դեռ բա- վական անմիջապես է: Նա հասնում է միայն 16 տոկոսի:

Այս տեսակետից մենք բավական հետ ենք մնացել կող- քըրդային մյուս հանրապետություններից:

Մուսաստանում գեղջկուհու մասնակցությունը հասնում է 29,9 տոկոսի

Բելոռուսիայում 26,7 »

Աղրբեջանում 36,0 »

Վրաստանում 37,7 »

Յեթե կանանց մասնակցության միջին տոկոսը հան- րապետական չափով հասնում է 16-ի, ապա պատկերն անմիջապես առանձին գավառներում: Հետաքրքիր է դիտել այդ ըստ գավառների:

Յերեանի գավառում հավասար է 13,69 տոկոսի

Լենինականի » » 9,48 »

Եջմիածնի » » 6,02 »

Լոռու-Փամբակի » » 13,74 »

Դիլիջանի » » 31,19 »

Էոր-Բայազետի » » 14,31 »

Դարալագլազի » » 18,09 »

Զանգեզուրի » » 35,43 »

Մեղրիի » » 46,72 »

Մեղրին, Դիլիջանը և Զանգեզուրն են, վոր գրությունը փրկում են: Մնացած գավառները չափազանց չետ են մնում, մասնավանդ Եջմիածնինը: Այս տեսակե- տից մեր նշանաբանը պետք է լինի՝ ինչ ել վոր լինի, քարձացնել կանանց ակտիվության աստիճանը: Այս նպատակով կին կազմակերպչունիների, պատղամավորական ժողովների և չքավորական խորհրդակցությունների առանձին հոգատարության առարկան պետք է դարձնել կանանց մասնակցության հարցը:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ինչ վերաբերում է խորհուրդների աշխատանքներին— այսուեղ նույնպես շատ բացեր ունենք: Մեզ մոտ գետեն շատ և շատ և խորհուրդների պատրիվ անդամների թիվը՝ ուեկցիաները դեռ լիովին չեն գիտակցել իրենց պարտա-

կանություններն ու անելիքները, նրանց մեջ գեռ բավարար չափով՝ ներգրաված չեն լայն աշխատավորական մասսաները, խորհուրդներն աղաս չեն քաջքուկից և բյուրոկրատիզմից և այլն։ Խորհուրդների աշխուժացման աշխատանքը տեսական և համառ աշխատանք է։ մենք ամենամեծ չափով պետք է ոգտագործենք առաջիկա բնտրական կամպանիան այդ նպատակով։

Հաշվետու և ընտրական ժողովներին գրավելով մաքսիմալ չափով՝ մեծ քանակությամբ՝ ընտրողների, մանավանդ կանանց, հնարավորություն տալով՝ նրանց իրապես մասնակցելու խորհուրդների աշխատանքների քննությանը, ներգրավելով՝ նրանց գեղի խորհուրդների աշխատանքները՝ սեկցիաների միջոցով, հնարավորություն տալով՝ նրանց աղաս և անբոնադատ կերպով մասնակցելու խորհուրդների անդամների թեկնածուների ընտրությանը, հնարավորություն տալով՝ գյուղխորհուրդների մեջ՝ ընտրելու գործունյա և Խորհրդային իշխանությանը՝ նվիրված աշխատավորների, մենք զարկ կտանք խորհուրդների աշխուժացմանը և աշխատավորների քաղաքական դաստիարակությանը։

ԻՆՔՆԱԲՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Խորհուրդների աշխուժացման հարցի հետ սերտորեն կապված է և ինքնաքննադատության հարցը, վորի լոգունդը կիրառվում է կյանքում ներկայումս կոմկուսակցության կողմից։

Լուրջ, առողջ և գործնական քննադատությունը մեծապես կողնի մեջ խորհուրդների աշխուժացման և սոցիալիստական մեր շինարարության գործում։

Մեր բոլոր պակասություններն աշխատանքների բոլոր ասպարեզներում պետք է իրենց արտահայտությունը դանեն ընտրական կամպանիայի մեջ։ լայն քննադատությունը մեծապես կողնի մեջ շտկելու մեր պակաս կողմերը, վերացնելու մեր միջից քաջքուկն ու բյուրոկրատիզմը, հեղափոխական որինականության խախտման դեպքերը, վորոնք գեռ մոտ բավական շատ են։

Առաջիկա ընտրական կամպանիայի միջոցին պետք է հասկացնել բոլոր աշխատավորներին, վոր այդ բացերը կարելի յէ վերացնել միայն և միայն նրանց բոլորի ակտիվ մասնակցությամբ։ Հազարավոր ու տասնյակ հազարավոր ընտրողների քննադատությամբ և մասնակցությամբ մենք հնարավորություն կունենանք վերացնել մեր բոլոր թերությունները և մաքրել խորհրդային ապարատն անհարազատ տարրերից։ Մենք գեռ ունենք այն պակասությունը, վոր քննադատությունը մեղ գուր չի գալիս, սակայն պետք է գիտակցել, վոր մեր աշխատանքների հաջողության համար այդ քննադատությունն անհրաժեշտ է։ Կլինեն, անշուշտ դեպքեր, յերբ զանազան անհարազատ տարրեր, կուլակները և նրանց ազգեցության տակ ընկածները կաշխատեն ոգտագործել ինքնաքննադատության լոգունդն իրենց հակահեղափոխական նպատակների համար։ Պետք է տարրերել ասողջ քննադատությունը հիվանդ, չարամիտ քննադատությունից և անմիջապես մերկացնել չարամիտ քննադատներին ու նրանց կեղադատ միտումները։

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ

Մասսաների քաղաքական գաստիարակության տեսակետից յերկրորդ եխմնական լոգունգը, վոր մենք աչքաթող չպետք է անենք, դա դասակարգային պայքարն է։

Մեր տնտեսական ամրացման հետ միասին բարձրացել են նաև ազգաբնակության բոլոր իսպերի քաղաքական ակտիվությունը։

Դեռ անցյալ 1927 թվականի բնարությունների միջոցին մենք ականատես եյինք դրան։

Առաջիկա ընտրությունները պետք է սպասել, վոր ընթանալու յեն դասակարգային պայքարի ավելի սրված պայմաններում։ Անցյալ ընտրությունների ժամանակ նկատելի յեր հակախորհրդային տարրերի աշխուժա-

ցում : Մեզ հայտնի յեն գեղքեր, յերբ դյուզի կուլակա-
յին տարրերը չքավորներին և միջակներին իրենց աղ-
դեցությանը յենթարկելու համար դիմում եյին զանա-
զան միջոցների . Հյուրասիրության, վարկավորման,
համոզելու, խնամիությունների, պրովոկացիաների և
այլն նման միջոցներով նրանք աշխատում եյին ներս սո-
ղոսկել խորհուրդները : Քանի վոր ներկա վերընտրու-
թյունները, կասկածից դուրս ե, ընթանալու յեն դա-
սակարգային ավելի սուր պայքարի մթնոլորտում, նը-
րանք ինչ առել կուզի, իրենց այդ միջոցներն ավելի
լայն չափով գործադրելու յեն և առաջիկայում : Պետք
է աչալուրջ լինել : Կուլակների ակտիվությանը պետք ե
հակադրել չքավորների և բարակների կազմակերպ-
ված ուժերը : Պետք ե ամեն կերպ ամրացնել նրանց դա-
շինքը միջակ դյուզացիության հետ : Պետք ե աշխատել
ապահովել չքավորների, բարակների և միջակների
մասնակցությունը խորհուրդներում և սրանց միացյալ
կազմակերպված ուժը հակադրել կուլակային տար-
րերին, նրանց կատարելապես չեղոփացնելով : Այստեղ ե,
վոր մենք պետք ե ցուցադրենք մեր կազմակերպչական
շնորհը :

Այս տեսակետից պետք ե վերացնենք այն պակա-
սությունները, վոր ունեցել ենք անցյալում :

Ի՞նչ պակասություններ են նկատվել անցյալում :

Շատ տեղերում չքավորությունը չունենալով ան-
հրաժեշտ գեկավարություն, թույլ ե մասնակցել բն-
տրություններին և լիովին չի գիտակցել իր դաստիար-
գութին շահերը :

Չունենալով ճիշտ գեկավարություն, չքավորու-
թյունը յերբեմն չի կարողացել իր կողմը գրավել միջա-
կին, իսկ լերբեմն ել ուղղակի իրենից հետ ե մղել նրան :
Որինակ չքավորական ժողովներին թույլ չեն տվել մաս-
նակցելու ակտիվ միջակին :

Խորհուրդների թեկնածուական ցուցակները նախա-
րոք չեն համաձայնեցվել չքավորների ու միջակների
հետ :

Յերբեմն թեկնածուական ցուցակները կազմել են
բացառապես չքավորներից, իսկ վորոշ տեղերում ել թե-
յեկ մացրել են միջակների, բայց շատ քիչ տոկոսով :
Ապագա ցուցակները կազմելիս պետք ե աշխատել մի-
ջակների համապատասխան տոկոսն ապահովել : Մի-
ջակներին յերբեմն ել հետ են մղել նաև սխալ ձայնա-
գրկության պատճառով : Առաջիկա բնտրական կամ-
պանիայում պետք ե խուսափել այդ սխալներից : Տեղա-
կան կուսակցական և խորհրդային կազմակերպու-
թյունները պետք ե ուժեղացնեն իրենց դեկավարու-
թյունը կազմակերպելու չքավորներին ու բատրակնե-
րին, ուժեղացնելու նրանց դաշինքը միջակի հետ և ընտ-
րական պայքարում առաջ բերելու նրանց վորպես
միասնական կազմակերպված ուժ :

Այս նպատակով պետք ե բնտրական կամպանիայի
գանազան շրջաններում անպայման բոլոր հարցերը մր-
շակել չքավորական խորհրդակցություններում և խրմ-
բակներում :

Առանձին ուշադրություն պետք ե դարձնել բատ-
րակների մեջ տարվող աշխատանքների վրա : Անցյալնե-
րում նկատվել ե բատրակների թույլ մասնակցությունը
թե՛ բնտրություններին և թե՛ խորհուրդների աշխատանք-
ներին : Պետք ե հաշվի առնել նրանց աշխատանքի ա-
ռանձնահատուկ պայմանները . տնտեսական կախումը
տերերից, գյուղերից հեռու գտնվելը, բատրակների
ընդհանուր հետամնացությունը և այլն : Անցյալ ընտ-
րություններից հայտնի յեն դեպքեր, յերբ բնտրու-
թյունների որը տերերը գիտմամբ իրենց բատրակներին
ուղարկել են գյուղից դուրս աշխատանքի, վորպեսզի
նրանք հնարավորություն չունենան մասնակցելու ընտ-
րություններին : Գյուղանտառն այստեղ խոշոր պար-
տականություններ ունի : Անցյալ ընտրություններին նրա
մասնակցությունը թույլ ե յեղել : Նա պետք ե ցուցադրի
ավելի կազմակերպչական աշխատանք և ձեռք առնի բո-
լոր միջոցները, վորպեսզի բատրակները բոլորը մաս-
նակցեն հաշվետու և ընտրական ժողովներին : Անհրա-

Ժեշտ և նաև խորհուրդների կազմում ապահովել բար-
րակների տոկոսը:

Հիմնական նշանաբանը՝ ա) կազմակերպել չքավոր-
ներին և բարակներին, ամբացնել նրանց դաշինքը մի-
ջակի հետ և սրանց գերիշանությունն ապահովել խոր-
եւրդներում, բ) չեղոքացնել ու հեռացնել կուլակին և
եակախորհրդային տարրերին խորհուրդներից:

ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԿԱՐԳԸ

Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նա-
խագահության վորոշմամբ ընտրական կամպանիան բա-
ժանվում է 3 շրջանների.

ա) Նախապատրաստական շրջան, վոր տեսելու յե-
տեկտեմբերի 1-ից մինչև 31-ը: Այս շրջանում ընտրա-
կան հանձնաժողովները ստանալով խորհուրդներից ընտ-
րական իրավունք ունեցողների և ընտրական իրա-
վունքներից զրկվածների ցուցակները, փաստացի կեր-
պով ստուգում, լրացնում և վերջնականապես հաստա-
տում են: Կազմում են իրենց աշխատանքի ծրագիրը, նր-
շանակում են հաշվետու և ընտրական ժողովների որերը,
միջոցներ են ձեռք առնում ապահովելու ժողովները
համապատասխան շենքերով և մասսայականացնելու
ընտրական հրահանգը,

բ) Հաշվետու շրջան, յերբ խորհուրդներն ու նրանց
գործադիր կոմիտեները հաշվետու յեն լինում իրենց
ընտրողների առաջ: Այս շրջանն ընդգրկելու յե ամբողջ
հունվար ամիսը, և

գ) Ծնորական շրջան, յերբ կայանալու յեն խոր-
հուրդների ընտրությունները, ընդգրկելու յե փետրվար
ամիսը:

Մարտի 1-ից մինչև 20-ը տեղի յեն ունենալու խոր-
հուրդների գավառակային և գավառային համագու-
մարները, այն հաշվով, վոր մարտի 20-ին այդ բոլորը
վերջացած լինեն:

ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՄՊԱՆԻԱ, ՆԱԿԱԶ

Խորհրդային կշխանության հիմքը կազմում է պե-
տական ապարատի կապը ընտրողների հետ: Խորհուրդ-
ները պատասխանառու և հաշվետու յեն ընտրողների ա-
ռաջ: Աշխատավորական լայն մասսաները պետք է հը-
նարավորություն և միջոց ունենան քաղաքականապես
ազդելու իրենց ընտրյաների, տվյալ դեպքում խոր-
հուրդների վրա: Խորհուրդների հաշվետավորությունը և
նակազներն այդ միջոցներից են:

Առհասարակ պետք է մի անգամ ընդմիջու հրաժար-
վել գյուղում վարչական, հրամայելու ձեռվ մասսայա-
կան աշխատանք տանելուց: Առաջիկա ընտրությունների
միջոցին պետք է աշխատել լիովին իրականացնել խոր-
հրդային դեմոկրատիայի սկզբունքները: Այդ կարելի
յե անել միայն բարձրացնելով աշխատավորների ակտի-
վությունը, ապահովելով բանվորների, չքավորների և
բարրակների մասնակցությունը քաղաքի և գյուղի հաշ-
վետու ժողովներում: Հաշվետու և ընտրական ժողով-
ներն առհասարակ այնպես պետք է տանել, վոր ընտրողն
զգա, թե ինքն իրավազոր անդամ է խորհրդային հասա-
րակության և վոչ թե լոկ մատ բարձրացնող մի մեքենա:
Պետք է բարձրացնել ընտրողի հեղինակությունը:

Հաշվետու կամպանիայի ընթացքում հիմնական մո-
մենտները պետք են լինեն՝

ա) Հաշվետու ժողովներին մասնակից անել ըստ հը-
նարավորության ընտրողների ճնշող մեծամասնու-
թյան.

բ) Ծնորողների առաջ զնել ընդհանուր և տեղական
բոլոր հարցերը.

գ) ապահովել ամենալայն ինքնաքննադատության
հնարավորությունները:

Մեր իրականությունը հարուստ է բազմաթիվ հար-
ցերով, վորոնք հուզում են բնակչությանը: Բնակարա-
նային շինարարության, քաղաքի և գյուղերի բարեկար-
գության հարցեր, ճանապարհների շինարարություն,
դպրոցներ ու լիկայաններ, առողջապահություն, հացի-

մատակարարում, պետապարատի այլանդակություններ, կոլլեկտիվ տնտեսություններ, ջրառուտագործում, անասունների և ցանքսերի ապահովագրություն, հարկային քաղաքականություն, կոռպերացիա և այլն և այլն: Այս բոլոր հարցերն առանց քաշվելու պետք ե իրենց արտահայտությունը գտնեն հաշվետու ժողովներում, պետք ե այդ բոլորը դարձնել ընդհանուրի սեփականություն, լայ ընտրողների կարծիքը, հարկավոր և ճշգրիտ բացարությունները տալու այդպիսով տեղական հարցերը կապելով մեր ընդհանուր քաղաքականության հետ, քաղաքականապես կրթել, դաստիարակել մասսաներին և նրանց ոգնությամբ վերացնել պակաս կողմերն ու թերությունները:

Պետք ե պարտագրել բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկա գտնվել հաշվետու ժողովներին և այնուղ հարկավոր սպասիչ բացարություններ տալ բոլոր արծարժակած հարցերի առիթով:

Խոչոր ե նաև նակազմների նշանակությունը: Նակազմները նույնպես ընտրողների և ընտրված մարմինների միջև կապ հաստատելու միջոցներից մեկն են: Նակազի միջոցով ընտրողների ընդհանուր ժողովը իր կամքն և թելադրում ընտրվածներին, ներկա գեպօւմ խորհրդին, վորը պետք ե հանդիսանա իրեն ընտրողների կույնություն կամքի արտահայտիչն և կյանքի մեջ կիրարկողը: Անցյալ ընտրությունների ժամանակ շատ տեղերում նակազմները կազմվել են մեքենայորեն, իրենց մեջ պարունակել են շատ խոչոր հարցեր, վորոնց իրագործումը վեր ե յեղեւ խորհրդի ուժերից: Նակազի մեջ իրենց արտահայտությունը պետք ե գտնեն տվյալ վայրի առաջիկա մեկ-յերկու տարվա աշխատանքի և շինարարության ծրագրերը, իրական հնարավորությունների սահմաններում: Այս պատճառով ել նակազի մեջ չպետք ե մացնել այնպիսի հարցեր, վորոնք իրագործելի չեն: Ավելի լավ է քիչ զբել և բոլորը կատարել, քան շատ բան խոստանալ և քիչ կատարել: Նակազմների մեջ պետք ե արտահայտվեն տեղական անմիջական կարիքներն ու պահանջ-

ները, վորապեսզի ընտրողները հնարավորության ունենան սուուղելու, թե վոր չափով են իրագործվել նրանք: Գյուղի ինտելիգենցիան, ուսուցիչը, բժիշկը, գյուղապետը պետք ե մասնակցեն նակազմների կազմելուն: Նակազը կազմելիս պետք ե հաշվի առնել հաշվետու ժողովում տեղի ունեցած մտքերի փոխանակությունը բնարողների և մասավանդ չքափորական խորհրդակցությունները:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային գեմոկրատիայի սկզբունքներից մեկն ել պատգամավորների պատասխանատվությունն ե իր ընտրողների առաջ: Հաշվետու կամպանիայի ընթացքում պետք ե աշխատել, վորապեսզի առանձին պատգամավորները ըստ հնարավորության հաշվի առն ընտրողներին իրենց տարած աշխատանքների մասին: Որինակ՝ խորհրդի կին անդամները զեկուցում են գյուղի կանանց ընդհանուր կամ պատգամավորական ժողովներում, խոչոր գյուղերում, վորտեղ հաշվետու ժողովները գումարիցում են թաղային սիստեմով, գյուղի զանազան թաղերում զեկուցում են խորհրդի զանազան անդամները, խորհրդի կամ յերիտական անդամը զեկուցում ե իրեն կազմակերպության ընդհանուր ժողովում և այլն: Ընտրողներն այդպիսով հնարավորություն կունենան սուուղելու իրենց ընտրյալի գործունեությունը և անհրաժեշտ ցուցմունքները տալու:

ՎԵՐՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հաշվետու ժողովներում խորհուրդների զեկուցման հետ զուգընթաց լսվելու յեն նաև վերստուգիչ հանձնաժողովների զեկուցումները: Արանք հասարակական կոնսուլի որդաններ են և պետք ե հասարակությանը իրազեկ պահեն տվյալ խորհրդի կամ դործագիր կոմիտեյի Փինանսատնտեսական գործունեության մասին: Առհասարակ վերստուգիչ հանձնաժողովների դործունեությունն ընդհանուր առմամբ թույլ ե, բայց վաղուց արդեն ժամանակ ե, վոր նբանքի իրենց աշխատանքի ան-

Հասմենությունն ըմբռնեն: Գյուղում կատարվում է խնքնահարկում, գանձվում են Պետապի տոկոսները, հարկեր և այլն: Գավառակային գործադիր կոմիտեներն ունեն բյուջեներ: Վերատուգիչ հանձնաժողովները պետք են պարբերաբար քննության յենթարկեն թե ինչպես են կազմված ինքնահարկման ցուցակները, ինչպես են գանձվում և պահպամ գումարները, վորքան նպատակահարմար և ճիշտ են ծախսվում գանձված գումարները, վորքան ճիշտ են ծախսվում բյուջեներով հատկացված գումարները, վորքան գյուղատնտեսական հարկ և գանձված, վորքան ճիշտ են յեղել գասակարգային մոտեցումը պետական հարկերի և ինքնահարկման գումարների գանձման գործում, քանի տնտեսություն են ազատված հարկեց և ինչպիսի տնտեսություններն են ազատված և այլն, և այլն: Այս և նման ըոլոր հարցերը հետաքրքրում են ընտրողներին, այդպիսով նրանք կկապվեն խորհուրդների հետ:

ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Հաշվետու կամպանիային հաջորդելու յեն ընտրությունները, վորոնց համար կենտղործկոմի Նախագահությունը նշանակել է փետրվար ամիսը:

Ընտրական հանձնաժողովները նախորոք պետք է պատրաստեն բոլոր պայմանները, վորպեսզի ընտրություններին մասնակցի ամբողջ աշխատավորությունը: Իր ժամանակին նրանք պետք է մտածեն չենքերի, վառելիքի և լուսավորության մասին, խոշոր գյուղերը պետք է բաժանվեն թաղամասերի, պետք է նշանակվեն ընտրությունների համար հարմար որեր, յերբ գյուղի բնակչությունը գյուղից բացակա չե: Ընտրություններին պետք է աշխատել տոնական բնույթ տալ, կազմակերպել փոքրիկ ցուցահանդեսներ, ներկայացումներ, յերեկույթներ, վորտեղ բացատրել ընտրությունների նշանակությունը և այլպիսով հասարակության ամբողջուշագրությունը կենացրոնացնել ընտրությունների շոր-ջը: Հարկավոր է աշխատել ստեղծելու արտակարգ մըթնույթը, վորպեսզի ընտրողները գիտակցեն ընտրու

թյունների կարեռությունը և ընտրական ժողովը տար-
բերեն սովորական հասարակական ժողովներից։ Ընտ-
րական հանձնաժողովները պետք ե ձեռք առնեն բոլոր
միջոցները, վորպեսզի բոլոր ընտրողները ժամանակին
(ընտրության որից գոնե 5 որ առաջ) ստանան իրենց
ծանուցագրերը։ Ծանուցագրերի բաժանման համար
բացի գյուղական կատարածուներից պետք ե ոգտագոր-
ծել դպրոցի մեծահասակ աշակերտներին և պիոներնե-
րին։ Այս վերջիններն պետք ե ոգտագործել մանավանդ
կանանց ծանուցագրերը բաժանելիս։ Ծառ անգամ կնոջ
ծանուցագրիրը հանձնում են նրա ամուսնուն, հորը կամ
յեղբորը, իսկ այս վերջինները մոռանում են հանձնել
կամ շատ անգամ ել դիտմամբ չեն հանձնում։ Այսինչ
յերիտասարդ աշակերտներն և աշակերտուհիները հա-
ջողությամբ կհանձնեն անմիջապես տերերին։

Կանանց և տղամարդկանց ժողովները պետք է միասին գումարվեն, բայց բացառիկ դեպքերում, այնտեղ, վորտեղ տեղական կենցաղային պայմանները թույլ չեն տալիս այդ անելու, կարելի յե և առանձին ժողովներ գումարել:

Ընտրություններից առաջ պետք է մտածել խոր-
հուրդների անդամների թեկնածուների ցուցակը կազմե-
լու մասին։ Չքափորական խորհրդակցությունները,
կանանց պատգամավորական ժողովները, կուսակցա-
կան, կոմյերիտական և այլ հասարակական կազմակեր-
պությունները գյուղի ակտիվի հետ միասին նախորոք
պետք է համաձայնեցնեն այդ ցուցակները և իրենց ա-
նունից առաջարկեն ընտրական ժողովին։ Ընտրական
հրահանգը թույլատրում է հասարակական կազմակեր-
պություններին թեկնածուների ցուցակները նախորոք,
ընտրություններից մի քանի որ առաջ հայտարարել,
վորպեսզի ընտրողները հնարավորություն ունենան ծա-
նոթանալու նրանց հետ։ Այս ձևը անցյալ ընտրություն-
ներին մի քանի տեղերում կիրառվել ե և հաջող հետեւանք
ե տվել, ուրիշ մի քանի տեղերում ել բացասական հետե-
վանքներ ե տվել այն մաքով, վոր գյուղացիներն ասել
են, թե «իրենք արդեն ընտրել են, մենք ել ինչացու յենք»։
Գյուղացիների այսպիսի վերաբերմունքը բացատրվում

և նրանով, նախ՝ վոր չի տարվել բացատրական աշխատանք, այն մտավով, վոր այդ ձեռվ կազմված նախնական ցուցակները վերջնական չեն, այլ նպատակ ունեն ոգնելու հենց իրենց ընտրողներին՝ մտածելու և քննելու, վորտեսվի խորհրդի մեջ ընտրվեն աշխատավորության շահերը պաշտպանող և նրա վատահությունը վայելող քաղաքացիներ և յերկրորդ՝ բացատրվում ե նրանով, վոր անցյալ ընտրություններին վորոշ տեղերում նախնական թեկնածուական ցուցակները կազմելուց հետո ընտրական ժողովների զեկավարները աշխատել են անպայման ամբողջ ցուցակն առանց փոփոխության մեքենայութեն անցկացնել, թույլ չտալով վորեւ քննադատական խոսք թեկնածուների հասցեյին կամ վորեւ փոփոխություն ցուցակի մեջ: Սա խախտումն ե ընտրական հրահանդի, խախտումն ե կուսակցության և Խորհրդային իշխանության քաղաքականության և խորհրդային զեմուկրատիայի: Ընտրական ժողովին պետք ե թույլ տալ աղատ և անկաշկանդ կերպով քննադատել յուրաքանչյուր թեկնածուին: Միայն այդ ձեռվ ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուն կունենա հեղինակություն և կվայելի բնակչության վատահությունը: Այսուեղ ել կազմակերպչական չնորհք և պահանջվում: Պետք ե հասկացնել ընտրողներին և փաստերով համոզել, վոր այս կամ այն թեկնածուն նրանց շահերը կպաշտպանի, համոզելով և վոչ հրամայելով կամ ճնշում գործ դնելով ընտրողների վրա:

ՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՍՈՒԼԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Անցյալի մեր թերություններից մեկն ել մեր պետական, պրոֆեսութանայ և հասարակական կազմակերպությունների թույլ մասնակցությունն ե ընտրություններին: Այս տարի նրանք բոլորը խոշոր շափով պետք ե մասնակցեն, մասնավանդ խորհուրդների հաշվետու ըրջանում: Մեր կենտրոնական ժողովրդական կոմիսարիատները պետք ե հրատարակեն իրենց հանրամատչելի հաշվետվությունները, պլակատների և գրքույթների

ձեռվ, նրանց գավառական մարմիններն իրենց ներկայացուցիչներին պետք ե գործուղղեն գյուղերը հաշվետու ժողովներին ներկա գտնվելու և հարկավոր բացատրությունները տալու համար: Խորհրդում պետք ե լսվեն գավառակային, յերբեմն նույնիսկ գավառային գործկոմների զեկուցումները, գավառական համագումարներում կառավարության զեկուցումը: Երջաններում պետք ե գումարվեն գյուղական խորհրդակցություններ, վորտեղ լսվեն զանազան զեկուցումներ՝ տվյալ վայրի համար խոշոր հետաքրքրություն ունեցող հարցերի մասին: Գյուղատրնահետական և սպառողական կոոպերացիաների կենտրոնները, բացի իրենց ապագիբ համառոտ հաշվետվություններից, պետք ե զեկուցումներ տան իրենց գործունեության մասին գյուղացիական խորհրդակցություններում, գործուղղեն իրենց ներկայացուցիչներին շրջանները զեկուցելու իրենց աշխատանքների և հետագա հեռանկարների մասին: Նույնը և ՓՈԿ-ի կենտրոնական վարչություննը, պրոֆմիութենական կազմակերպությունները, «Կորչի Անդրադիտությունը» ընկերության կենտխորհուրդը, ՄՊՊՌ-ը և մյուս հասարակական կազմակերպությունները: Մեկ խոսքով ընտրական կամպանիան բոլոր մեր կազմակերպությունները պետք ե ողտագործեն խորհրդային հասարակության ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելու նրան հուղով բոլոր հարցերի չուրջը:

Նախապարաստական և հաշվետու շրջանում բոլոր խրճիթ-ընթերցարանները, կարմիր անկյուններն ե ակումբները, ինչպես և դպրոցները պետք ե պարբերաբար զբաղվեն ընտրական հրահանդը պարտարաններու ու մասնայականացնելու գործով:

Հասկանալի յէ, վոր ընտրությունների միջոցին խորհրդութերը շարունակարար պետք ե զբաղվեն ընտրությունների հարցերով: Բան և զյուղթղթակիցները պետք ե մաքսիմալ ուշադրություն գարձնեն այս բանի վրա: Ընտրական հանձնաժողովների անգործունեու

թյունը կամ սխալ քայլերը, դասակարգային պայքարի արտահայտությունները, կուլակի վոտնձգություններն ու մեքենայությունները, չքավորական խորհրդակցությունների մեթոդներն ու արդյունքները և նման բազմաթիվ հարցեր պետք է ժամանակին արտահայտություն գտնեն մամուլի եջերում, վորպեսզի հնարավոր լինի սխալներն իր ժամանակին ուղղել և հարկավոր ղեկավարությունը ցույց տալ:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈԲՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Անցյալ ընտրական կամպանիաների ընթացքում աշխատանքը թույլ է ընթացել ազգային փոքրամասնությունների մեջ: Դրա գլխավոր պատճառը համապատասխան աշխատողների և գրականության բացակայությունն է յեղել: Այս կողմից մենք այս տարի ավելի բարեհաջող պայմանների մեջ ենք: Նախ աշխատող թուրք ընկերների թիվն այժմ անհամեմատ ավելի շատ է, քան որանից յերկու տարի առաջ: Մենք բավական յերիտասարդ ուժեր ստացել ենք խորհրդային և կուսակցական դպրոցներից: Գրականության տեսակետից նույնպես վատ չե. մեր տպարանն այժմ ունի թրքական տառեր: Ընտրական հրահանգը, հաշվետվությունների բոլոր ձևերը, ընտրական ծանուցագրերը և մյուս բլանկները մենք հնարավորություն ենք ունեցել տպագրելու յերեք լեզուներով: Ընտրական կենտրոնական Հանձնաժողովը վորոշում ունի լայն չափով ոգտագործելու թուրքերն «Զանգի» թերթն՝ ընտրական որենքների պարզաբանման և ընտրական կամպանիայի հարցերի մասսայականացման նպատակով: Դեկավար ընույթ կրող հրահանգները կենտրոնում տպագրվում են մեքենայի վրա ուսուերեն լեզվով և ուղարկվում սուսական գյուղերին: Մնում ե վոր տեղերն աշխատանքի այս չափազանց կարեոր կողմից վրա հատուկ ուշադրություն դարձնեն և ցուցաբերեն կազմակերպչական հմտություն: Անհրաժեշտ է յեղած ուժերն ոգտագործել նպատակահրամար կերպով, հրատարակվող գրականությունը կանոնավոր տարածել, ընտրական աշխատանքները ղեկավարելու

համար մոբիլիզացիայի յենթարկված ընկերներից թուրքական և ոռւսական գյուղերին ամբացնել նրանց լեզուն գիտցող և նրանց պայմաններին, նիստ ու կացին ծանոթ ընկերների և ըստ հնարավորին ապահովել նրանց ներկայությունը կամպանիայի հաշվետու և ընտրական շրջաններում:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ընտրական կամպանիայի ընթացքում խոչը պարտականություն է ընկնում գյուղական ինտելիգենցիայի վրա: Բժիշկը, գյուղատնտեսը, յերկրաչափը, ուսուցիչը, անասնաբույժը, ժողովատավորը և այլն մեծ չափով պետք է ողագործվեն թե՛ ընտրական կամպանիայի և թե՛ խորհուրդների աշխատանքների ընթացքում: Գավառակային գործկոմներն և գյուղխորհուրդները պետք է ողագործեն նրանց նպատակահրամար ձևով: Նրանք բոլորը պետք է մասնակցեն նակազներ կազմելու աշխատանքներին, հաշվետվության ժամանակ պետք է հանդես գան հարկավոր բացարություններով արծարծված հարցերի առթիվ, ուսուցիչները պետք է գրույցներ և գասախոսություններ կազմակերպեն ընտրական որենքների պարզաբանման նպատակով թե՛ դպրոցներում և թե՛ գյուղացիների համար, մանավանդ այն գյուղերում, վորտեղ չկան խրճիթ-ընթերցարաններ: Նրանցից պետք է ընտրել խորհուրդների և նրանց սեկցիաների կազմի մեջ:

ՆՈՐ ՈՒԺԵՐԻ ԱՌԱՋՔԱՇՈՒՄ

Ընտրական կամպանիայի կարևոր հարցերից մեկն ել գյուղական ակտիվիտեացման հարցն է:

Խորհրդային իշխանության ութամյա գոյության ընթացքում գյուղում արգեն ստեղծվել է խորհրդային աշխատողների վորոշ կադր, սակայն գյուղն առաջ է գնում մեծ արագությամբ, որեցոր ստվարանում է առաջավոր, ակտիվ գյուղացիների թիվը, վորոնք անկեղծորեն ցանկանում են աշխատել, մանավանդ յերի-

